

Luys Lnyu®



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ.....	2
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	5
ՀՀ պետական բյուջեի եկամուտները	7
ՀՀ պետական բյուջեի ծախսերը.....	9
ՀՀ պետական բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման.....	11
ՀՀ պետական բյուջեի պակասուրդը և հարկաբյուջետային ազդակը	16
ՀՀ պետական պարտքը.....	18
ՀՀ պետական բյուջեի համապատասխանությունը հարկաբյուջետային կանոններին	19
ԱՄՓՈՓՈՒՄ	19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեն արտացոլում է այդ տարվա ընթացքում կառավարության կողմից իրականացվելիք ծրագրերը և միջոցառումները, որոնք պետք է նպաստեն երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և կենսամակարդակի բարձրացման նպատակների ապահովմանը: Առաջիկա տարվա բյուջեում է արտացոլվում նաև, թե ինչ ուղղություններով է կառավարությունը կանխատեսում ծախսել տարվա համար նախատեսված լրացուցիչ ֆինանսական ռեսուրսները: Սույն վերլուծությունում նպատակ է դրվել հնարավորինս ամբողջական ներկայացնել բյուջեի եկամտային և ծախսային ուղղությունները՝ քննարկելով դրանց իրատեսականությունը և համապատասխանությունը ստեղծված իրավիճակին:

Տնտեսության տված հնարավորությունների տեսանկյունից 2023թ. բյուջեն բավական լավ դիրքերում է, քանի որ 2022թ. գրանցված բարձր տնտեսական աճի և գնաճի պայմաններում զգալիորեն աճել է անվանական ՀՆԱ-ն՝ հանգեցնելով հարկային եկամուտների աճին և հնարավորություն տալով 2023թ. համար պլանավորել ավելի մեծ ծախսեր:

Սակայն, միևնույն ժամանակ, 2022թ. բարձր տնտեսական աճի գործոնները կարող են ժամանակավոր լինել, և հաջորդ տարի դրանց բացակայության պայմաններում բավական դժվար կլինի ապահովել կառավարության կողմից թիրախավորված 7% տնտեսական աճը: Դա կառաջացնի լրացուցիչ խնդիրներ բյուջեի կատարման տեսանկյունից: Այս իրավիճակում կառավարությունը պետք է բյուջեում ներառեր ծրագրեր կամ հստակ ուղերձներ այն միջոցառումների մասին, որոնք ուղղված լինեին տնտեսական ներկա զարգացումների պայմաններում կառավարության արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության իրականացմանը, այնպես որ տնտեսության գերտաքացած ոլորտներից ռեսուրսները հնարավոր լինեին վերաբաշխել տնտեսության կայուն աճ գեներացնող ոլորտներ: Սակայն, ներկայացված բյուջեի ցուցանիշների վերլուծությունից տպավորություն է ստեղծվում, թե բյուջեն հիմնված է այն ենթադրության վրա, որ առկա իրավիճակը շարունակվելու է նաև 2023 թվականին, մինչդեռ բյուջեի ուղերձում նշվում է, որ ՀՀ տեղափոխված ՏՏ ոլորտի ընկերությունների և աշխատակիցների միայն որոշ մասը կմնան Հայաստանում:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Պետական բյուջեի հնարավորությունները բխում են տնտեսական զարգացումներից, և որքան բարձր է տնտեսության աճի տեմպը, այնքան ավելի արագ են աճում բյուջեի հնարավորությունները: Հետևաբար, էական է, թե կառավարությունը ինչպես է կանխատեսում բյուջետային տարվա մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք հիմք են հանդիսանում բյուջեի ցուցանիշների ծրագրավորման համար: Այս առումով, առկա իրավիճակը բավական դրական է՝ պայմանավորված ՀՀ տնտեսության վրա ռուս-ուկրաինական հակամարտության և ՌԴ նկատմամբ սանկցիաների ունեցած դրական հետևանքներով, որոնց պայմաններում ՀՀ տնտեսական ակտիվության աճը բավական արագացել է՝ հունվար-սեպտեմբերին հասնելով 14.1%-ի:


2022-ին, վերոհիշյալ գործոններով պայմանավորված, սպասվում է շուրջ 11% տնտեսական աճ, որը էապես գերազանցում է կառավարության կողմից թիրախավորված 7%-ը: Բացի այդ, տարվա ընթացքում մեծ տեմպերով արագացել է նաև գնաճը՝ հոկտեմբերին հասնելով 9.5%-ի, հետևաբար կառավարությունը բարձրացրել է նաև ՀՆԱ-ի դեֆլյատորի կանխատեսումը՝ 4.6%-ից հասցնելով 7.0%-ի: Արդյունքում, 2022թ. սպասվող անվանական ՀՆԱ-ն շուրջ 424.2 մլրդ դրամով ավելի է, քան 2022թ. բյուջեի հիմքում դրված ցուցանիշը, ինչը առաջացնում լրացուցիչ հարկային եկամուտներ՝ մեծացնելով բյուջեի ծախսերի աճի հնարավորությունները:

Ըստ կառավարության կանխատեսումների՝ հաջորդ տարվա՝ 2023-ի տնտեսական աճը կլինի շուրջ 7%: Ավելի ճիշտ կլինի ասել, որ սա ոչ թե կանխատեսում է, այլ կառավարության ծրագրով նախատեսված թիրախ, որը սահմանված էր նաև կառավարության 2023-2025թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով: Ի դեպ, 2023թ. համար 7% տնտեսական աճի կանխատեսում այլ մարմինների փաստաթղթերում չենք հանդիպում: Օրինակ, ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) նոյեմբերի կանխատեսման, 2023թ. տնտեսական աճը կլինի շուրջ 4-5%, ինչը համահունչ է նաև ՀՀ կենտրոնական բանկի (ԿԲ) կանխատեսումներին:

Տնտեսական աճի՝ կանխատեսվածից ցածր լինելու պարագայում ցածր կլինեն նաև հարկային եկամուտները, և կվտանգվի բյուջեի ծախսերի ամբողջական կատարումը: Հետևաբար, կառավարությունը պետք է զգույշ լինի թիրախային ցուցանիշի հիման վրա բյուջեի ծախսերը պլանավորելիս, հատկապես, հաշվի առնելով այն, որ 2022թ. բարձր տնտեսական աճը պայմանավորող գործոնները կապված են աշխարհաքաղաքական իրավիճակի հետ և կարող են խիստ

Ժամանակավոր լինել: Ավելին, նույն կառավարությունը 2023 թվականի բյուջեի ուղերձում ակնկալում է, որ տնտեսական աճը պայմանավորող գործոններից՝ կապիտալի ներհոսքի շոշափելի մաս կազմող՝ Հայաստան տեղափոխված SS ոլորտի ընկերությունների և աշխատակիցների միայն որոշ մասը կմնա Հայաստանում: Հետևաբար, 2022թ. բարձր բազայի նկատմամբ 7% աճ ապահովելը բավական բարդ կլինի:

Գծապատկեր 1. 2022 և 2023 թվականների տնտեսական աճի կանխատեսումները, %



Ըստ բյուջեի հիմքում դրված կանխատեսումների՝ ինչպես 2022թ., այնպես էլ 2023թ. սպասվում է աճ տնտեսության բոլոր ճյուղերում, այդ թվում՝ գյուղատնտեսությունում: Վերջինիս տնտեսական ակտիվության ցուցանիշը, սակայն, հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով դեռևս ուներ նվազման միտում, որի պայմաններում 2022թ. կանխատեսվող (սպասվող) 2.2% աճը չափազանց լավատեսական է: 2023-ին կանխատեսվում է ծառայությունների և շինարարության՝ մյուս ոլորտների համեմատ առաջանցիկ աճեր, որոնք, սակայն, կլինեն ավելի ցածր 2022-ի համեմատ:

Աղյուսակ 1. 2023թ. պետական բյուջեի հիմքում դրվող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները¹

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ	2019	2020	2021	2022	2023
	փաստ.	փաստ.	փաստ.	սպասում	ծրագիր
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	6,543.3	6,181.9	6,983.0	8,293.7	9,317.9
Տնտեսական աճ, %	7.6	-7.2	5.7	11.0	7.0

¹ << կառավարության 2023 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր:

ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	1.0	1.8	6.9	7.0	5.0
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ), %	1.8	0.7	3.7	8.5	3.6
Գնաճ (միջին), %	2.5	1.4	1.2	8.1	5.6
ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների, %					
Արդյունաբերություն	11.9	-1.4	3.5	5.0	5.1
Գյուղատնտեսություն	-5.8	-3.7	-0.6	2.2	3.0
Շինարարություն	6.5	-5.9	3.1	16.9	9.6
Ծառայություններ	10.0	-9.6	7.9	15.6	8.2
Զուտ հարկեր	7.1	-9.9	7.4	6.2	7.2
ՀՆԱ ծախսային բաղադրիչների իրական աճերը, %					
Վերջնական սպառում	11.7	-10.9	4.4	7.8	4.0
Պետական	12.9	9.2	8.4	-5.3	-2.2
Մասնավոր	11.5	-14.0	3.7	10.7	5.2
Հիմնական միջոցներում ներդրումներ ²	4.4	-1.5	6.3	18.3	18.4
Պետական	13.7	6.1	26.0	19.4	38.1
Մասնավոր	2.6	-3.1	1.7	18.0	12.7
Արտաքին հատված (մլն ԱՄՆ դոլար)					
Ընթացիկ հաշիվ	-997.0	-477.8	-515.1	-768.9	-1,213.7
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-1,809.0	-1,264.1	-1,107.9	-1,113.0	-1,272.5
Արտահանում	5,794.4	3,818.2	5,011.9	7,682.8	8,784.1
Փոփոխություն, %	17.6	-34.1	31.3	53.3	14.3
Ներմուծում	7,603.4	5,082.3	6,119.7	8,795.8	10,056.6
Փոփոխություն, %	13.8	-33.2	20.4	43.7	11.6
Դրամական փոխանցումներ	1,162.5	1,046.2	1,243.1	1,324.1	1,371.2
Արտաքին հատված (ՀՆԱ-ի նկատմամբ %)					
Ընթացիկ հաշիվ	-7.3	-3.8	-3.7	-4.2	-5.7
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-13.3	-10.0	-8.0	-6.0	-6.0
Արտահանում	42.5	30.2	36.2	41.7	41.1
Ներմուծում	55.8	40.2	44.1	47.8	47.1
Դրամական փոխանցումներ	8.5	8.3	9.0	7.2	6.4

² Կապիտալ ներդրումներում ներառված չէ պաշարների փոփոխությունը, ներկայացված են միայն հիմնական միջոցներում կատարված կապիտալ ներդրումները, քանի որ 2019թ.-ից ՀՀ ՎԿ կողմից պաշարների փոփոխությունը հաշվառվում է որպես հաշվեկշռող գործոն կամ այլ կերպ՝ վիճակագրական սխալները ներառվում են դրա մեջ:

2023թ. տնտեսական աճի ապահովման գործում էական դեր են ունենալու նաև ներդրումները հիմնական միջոցներում, որոնց աճը կանխատեսվել է շուրջ 18.4%՝ գրեթե նույն չափով, ինչ 2022թ. սպասվող ցուցանիշն է: Ընդ որում, պետական ներդրումների՝ պետական կապիտալ ծախսերի գծով կանխատեսվել է 38.1% աճ, որը, սակայն, հավանաբար տեղի չի ունենա կապիտալ ծախսերի թերակատարման հետևանքով (այս մասին առավել մանրամասն կներկայացվի հաջորդ բաժիններում):

2022թ. ՀՀ-ից ապրանքների արտահանման ծավալները կտրուկ աճել են՝ հունվար-հոկտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 71.2%-ով: Վերջինս հիմնականում պայմանավորված է եղել վերարտահանման գործընթացի արագացմամբ: Դրա մասին է վկայում նաև այն, որ նույն ժամանակահատվածում արձանագրվել է ապրանքների ներմուծման 63.5% աճ:

Նշված զարգացումների արդյունքում 2022թ. ապրանքների և ծառայությունների արտահանման աճը սպասվում է շուրջ 53.3%, իսկ ներմուծման աճը՝ 43.7%: 2023թ. կանխատեսվում է և՛ արտահանման, և՛ ներմուծման աճի տեմպերի դանդաղում մինչև համապատասխանաբար 14.3% և 11.6%: Ըստ կանխատեսումների՝ ապրանքների և ծառայությունների արտահանումը 2023-ին կունենա ներմուծման համեմատ առաջանցիկ աճի տեմպ, սակայն ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ կնվազի՝ կազմելով 41.1%՝ 2022թ. սպասվող 41.7%-ի համեմատ:

Գնաճի մասով կառավարությունը հիմնվում է ԿԲ կանխատեսումների վրա, ըստ որոնց 2022թ. 12-ամսյա գնաճը կկազմի 8.5%, իսկ միջին գնաճը՝ 8.1%՝ էապես բարձր լինելով ԿԲ թիրախից: Առաջիկա տարվա ընթացքում գնաճի տեմպն աստիճանաբար կդանդաղի՝ մոտենալով թիրախային միջակայքին:


ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2022 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին բյուջեի եկամուտները նույնպես բարձր տեմպով են աճել՝ մի կողմից՝ պայմանավորված բարձր տնտեսական աճով, մյուս կողմից՝ հարկային օրենսդրության փոփոխություններով: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2022թ. հունվար-հոկտեմբերին կազմել են 1,662.5 մլրդ դրամ՝ աճելով 23.1%: Պետական բյուջեի ծախսերը 2022 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին նույնպես աճել են՝ պայմանավորված ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի աճերով, ինչի արդյունքում ձևավորվել է բյուջեի պակասուրդ 13.0 մլրդ դրամի չափով: Տարեկան տվյալներով սպասվում է բյուջեի բավական մեծ պակասուրդ՝ 204.2 մլրդ դրամի չափով: Դա

պայմանավորված է նրանով, որ կառավարությունը ծախսերի թերակատարում չի սպասում, իսկ եկամուտների աճի տեմպն ակնկալում է, որ կպահպանվի մինչև տարեվերջ: Մինչդեռ հատկապես կապիտալ ծախսերի կատարման ընթացքը ցույց է տալիս, որ դրանք թերակատարվելու են, և 2022թ. պլանավորված պակասուրդը չի արձանագրվելու:

2023թ. կանխատեսելով բյուջեի եկամուտների էական աճ՝ կառավարությունը ծրագրել է ավելի մեծ չափով մեծացնել ծախսերը և պակասուրդը: Այսպես, կառավարության կանխատեսումների համաձայն՝ բյուջեի եկամուտները 2022թ. սպասվող ցուցանիշի համեմատ կաճեն շուրջ 11.3%՝ կազմելով 2,302.0 մլրդ դրամ: Պակասուրդը պլանավորվել է մեծացնել շուրջ 41.5%-ով՝ հասցնելով 288.9 մլրդ դրամի: Արդյունքում հնարավորություն կստեղծվի մեծացնել բյուջեի ընդհանուր ծախսերը շուրջ 15.3%-ով՝ հասցնելով մինչև 2,591.0 մլրդ դրամի:

Գծապատկեր 2. Պետական բյուջեների ցուցանիշների համեմատականը 2021-2023թթ., մլրդ դրամ




Սակայն, և՛ եկամուտների հավաքագրումը, և՛ ծախսերի իրականացումը պարունակում են ռիսկեր, որոնց մասին առավել մանրամասն կներկայացնենք հաջորդ բաժիններում:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքում գերակշիռ դեր ունեն հարկային եկամուտները՝ կազմելով ավելի քան 90%: 2023-ին դրանց դերն ավելի է մեծանալու՝ հասնելով 95.7%-ի՝ 2022թ. սպասվող 92.8%-ի դիմաց: Փոխարենը նվազելու են պետական դրամաշնորհների և այլ եկամուտների (ոչ հարկային եկամուտների) կշիռները՝ համապատասխանաբար 1.0 և 2.0 տոկոսային կետով:

Գծապատկեր 3. Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը 2018-2023 թվականներին, %




Հարկային եկամուտների մասով կառավարությունը կանխատեսում է բարձր ցուցանիշներ՝ ինչպես 2022, այնպես էլ 2023 թվականներին: Դա պայմանավորված է 2022թ. բարձր տնտեսական աճով, որի պայմաններում հարկային եկամուտները նույնպես բարձր աճ են ունեցել: Այսպես, հունվար-հոկտեմբեր ամիսներին հարկային եկամուտները կազմել են 1,559.2 մլրդ դրամ՝ աճելով 21.9%-ով: Այդ աճը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի (աճը՝ 22.2%), շահութահարկի (աճը՝ 46.4%) և պետական տուրքի (աճը՝ շուրջ 2.6 անգամ) աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր հարկերի աճին կազմել են համապատասխանաբար 7.5, 5.4 և 4.9 տոկոսային կետ: Պետական տուրքի աճը պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով, մասնավորապես՝ մետաղական հանքանյութերի արտահանման տուրքի ներդրմամբ:

Սպասվում է, որ հարկերի աճի բարձր տեմպը կպահպանվի մինչև տարեվերջ՝ տարվա արդյունքներով կազմելով 1,920 մլրդ դրամ և աճելով 21%-ով: Այդ պայմաններում, հարկեր/ՀՆԱ ցուցանիշը կկազմի 23.15%՝ 2021թ. համեմատ բարելավվելով ընդամենը 0.4 տոկոսային կետով: Մինչդեռ, ըստ 2022թ. պետական

բյուջեի, հարկեր/ՀՆԱ ցուցանիշի բարելավումը պետք է լիներ 0.9 տոկոսային կետ (2021թ. սպասվող 22.5%-ից պետք է դառնար 23.4%), որից 0.4 տոկոսային կետը՝ վարչարարության հաշվին, իսկ մնացածը՝ օրենսդրական փոփոխությունների: Փաստացի արձանագրված 23.15% ցուցանիշում շուրջ 0.6 տոկոսային կետ է կազմում մետաղների արտահանման տուրքի ազդեցությունը, որը հենց օրենսդրական փոփոխություն է, և դրա բացակայության դեպքում հարկեր/ՀՆԱ-ն կնվազեր 0.2 տոկոսային կետով: Դա նշանակում է, որ հարկային վարչարարության բարելավում, այսինքն՝ ստվերի կրճատում 2022-ի ընթացքում տեղի չի ունեցել:

Հաջորդ տարվա համար կառավարությունը նախատեսել է ևս 0.5 տոկոսային կետով բարելավել հարկեր/ՀՆԱ ցուցանիշը՝ հասցնելով 23.7%-ի: Սակայն, պետք է հաշվի առնել այն, որ մետաղական հանքանյութերի արտահանման տուրքը 2022թ. սեպտեմբերից չի գործում, հետևաբար դա հաջորդ տարի դառնալու է հարկեր/ՀՆԱ-ն նվազեցնող գործոն՝ առնվազն 0.6 տոկոսային կետով (եթե հիմք ընդունենք 2022թ. փաստացի հավաքագրումները այդ հարկատեսակի գծով): Որևէ այլ օրենսդրական փոփոխություն, որը կնպաստի հարկեր/ՀՆԱ-ի նշանակալի բարելավմանը, 2022-ին նախատեսված չէ: Հետևաբար, ստացվում է, որ վարչարարության հաշվին հարկեր/ՀՆԱ-ի բարելավումը պետք է լինի ոչ թե 0.5 այլ 1.1 տոկոսային կետ (որպեսզի փոխհատուցի արտահանման տուրքի բացասական ազդեցությունը և ևս 0.5 տոկոսային կետով բարելավի հարկեր/ՀՆԱ-ն): Ենթադրվում է, որ սա անհրատեսական թիրախ է՝ հաշվի առնելով այն, որ նույնիսկ 2022-ի բարձր տնտեսական աճի պայմաններում հարկեր/ՀՆԱ-ի բարելավում վարչարարության հաշվին գրեթե չի արձանագրվելու:

Գծապատկեր 4. Պետական բյուջեի հարկային եկամուտները և հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը




Այլ եկամուտների գծով մուտքերը 2023 թվականի համար ծրագրվել են 81.1 մլրդ դրամի չափով, որը 2022թ. սպասվող ցուցանիշի համեմատ պակաս է 28.2%-ով, իսկ 2021թ. փաստացի ցուցանիշից՝ 4.1%-ով: Պաշտոնական դրամաշնորհների գծով մուտքերը 2023թ. կկազմեն 17.2 մլրդ դրամ՝ ավելի քան 2 անգամ ցածր լինելով 2022թ. սպասվող ցուցանիշից:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ


Պետական բյուջեի ծախսերը 2022 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին աճել են շուրջ 7.9%-ով՝ պայմանավորված ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի աճերով, և կազմել են 1,675.5 մլրդ դրամ: Ընթացիկ ծախսերի աճի տեմպը կազմել է 4.7%, ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններն աճել են 38.6%-ով՝ կազմելով 201.2 մլրդ դրամ, իսկ կապիտալ ծախսերն աճել են 41.9%-ով՝ կազմելով 207.5 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ թեև կապիտալ ծախսերի ծավալը զգալիորեն բարձր է նախորդ տարվա մակարդակից, այնուամենայնիվ այն էականորեն ցածր է եղել պլանավորվածից: Բացի այդ, կապիտալ ծախսերի աճի գործում էական դեր ունեն պաշտպանական ոլորտին ուղղվող կապիտալ ծախսերի աճը, այսինքն՝ տնտեսական ենթակառուցվածքներին ուղղվող կապիտալ ծախսերի աճը կարող է ավելի փոքր լինել (հստակ տվյալներ չկան, քանի որ պաշտպանական ոլորտի կապիտալ ծախսերի ծավալը գաղտնի է):

Գծապատկեր 5. Պետական բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման



Պետական բյուջեի ընթացիկ ծախսերը 2023թ. կկազմեն 2043.3 մլրդ դրամ, որոնց կազմում ընթացիկ առաջնային ծախսերը սահմանափակված կլինեն նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների փաստացի անվանական միջին աճի չափով: Իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների մակարդակը ծրագրավորվել է հապես մեծացնել՝ հասցնելով 547.7 մլրդ դրամի կամ ՀՆԱ-ի 5.9%-ին, որում կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը) կհասնեն ՀՆԱ-ի 6.0%-ի:

Գծապատկեր 6. Կապիտալ ծախսերի ծավալները 2018-2022թթ. (մլրդ դրամ) և դրանց կատարողականը (%)




Սակայն, նմանօրինակ բարձր աճ էր նախատեսվել նաև 2022-ի բյուջեով, որը փաստացի չի իրականացվում: Այսպես, խրոնիկ թերակատարումների երևույթը շարունակվում է նաև 2022 թվականին, երբ հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով կապիտալ ծախսերի կատարողականը կազմել է ընդամենը 63.2%: Հետևաբար, ինչպես 2022, այնպես էլ 2023 թվականի կապիտալ ծախսերի իրականացումը ռիսկային է, և փաստացի կապիտալ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը կարող է չհասնել կառավարության թիրախավորած մակարդակին, ինչը կարող է վտանգել հաջորդ տարվա տնտեսական աճի թիրախային ցուցանիշի ապահովումը:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

2023թ. պետական բյուջեով 2022թ. բյուջեի համեմատ էական՝ 30.3% աճ է նախատեսված ընդհանուր բնույթի պետական ծառայությունների գծով ծախսերի համար, որոնք ընդհանուր ծախսերի աճին կունենան 13.2 տոկոսային կետ նպաստում: Արդյունքում, բյուջեի կառուցվածքում 2022թ. բյուջեի համեմատ կաճեն ընդհանուր բնույթի պետական ծառայությունների գծով ծախսերը, որոնց տեսակարար կշիռը կհասնի 47.7%-ի՝ նախորդ տարվա 43.4%-ի համեմատ (Գծապատկեր 7): Փոխարենը տնտեսական և սոցիալական ոլորտներին ուղղվող ծախսերի կշիռները կնվազեն, քանի որ այդ ուղղությամբ ծախսերի աճն ավելի համեստ է՝ համապատասխանաբար 12.7% և 13.0% (Աղյուսակ 2):

Գծապատկեր 7. Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ ծառայությունների խոշորացված խմբերի, %



Աղյուսակ 2. Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ գործառնական դասակարգման

	2020 փաստ.	2021 փաստ.	2022 բյուջե	2023 բյուջե
մլրդ դրամ				
Ընդամենը	1,894.6	2,004.3	2,184.0	2,591.0
Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ	883.5	877.0	948.7	1,236.4
Տնտեսական ծառայություններ	138.9	167.3	237.4	267.8
Սոցիալական ծառայություններ	872.2	960.0	929.6	1,050.7
Պահուստային ֆոնդ	0.00	0.0	68.4	36.2
Աճ*, %				
Ընդամենը	16.3	5.8	9.0	18.6

Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ	13.4	-0.74	8.2	30.3
Տնտեսական ծառայություններ	3.7	20.48	41.9	12.7
Սոցիալական ծառայություններ	21.8	10.06	-3.2	13.0
Պահուստային ֆոնդ	-	-	-	-47.0
Նպաստումը, տոկոսային կետ				
Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ	6.4	-0.3	3.6	13.2
Տնտեսական ծառայություններ	0.3	1.5	3.5	1.4
Սոցիալական ծառայություններ	9.6	4.6	-1.5	5.5
Պահուստային ֆոնդ	0.0	0.0	3.4	-1.5

* 2022թ. բյուջեի ցուցանիշների աճերը ներկայացված են 2021թ. փաստացի ցուցանիշների համեմատ, իսկ 2023թ. բյուջեի ցուցանիշների աճերը՝ 2022թ. բյուջեի համեմատ:

Ընդհանուր նշանակության պետական ծառայությունների կազմում ներառվում են ընդհանուր հանրային ծառայությունները, պաշտպանության և հասարակական կարգի ու անվտանգության, ինչպես նաև դատական գործունեության գծով ծախսերը: Այս ծախսերի կազմում զգալիորեն բարձր է պաշտպանության ոլորտին ուղղվող ծախսերի աճը, որը 2022թ. բյուջեի համեմատ կազմում է 50.0%: Բնականաբար պատերազմական իրավիճակում գտնվող երկրի համար պաշտպանության ոլորտի ծախսերի աճը սպասելի և ցանկալի է, սակայն, խնդիրն այն է, որ կառավարությունը նախորդ տարիներին այս հարցի վրա առանձնապես ուշադրություն չի դարձրել: Մասնավորապես՝ 2021-ին 2020-ի համեմատ պաշտպանությանն ուղղվող ծախսերը նվազել են 13.3%-ով, իսկ 2022թ. բյուջեով աճել են ընդամենը 3.3%-ով: Ստացվում է, որ պատերազմի ծանր հետևանքներից հետո երկու տարիների ընթացքում պաշտպանության ոլորտում էական փոփոխություններ չեն եղել, և միայն հիմա է կառավարությունը որոշել մեծացնել ծախսերը: Ավելին, 2022թ. պետական բյուջեով պաշտպանության ոլորտին հատկացված ծախսերի հունվար-սեպտեմբերի ճշտված պլանը կատարվել է ընդամենը 67.5%-ով, ինչը նշանակում է, որ նույնիսկ պլանավորված գումարները այս ոլորտում չեն ծախսվում:


Աղյուսակ 3. Ընդհանուր նշանակության պետական ծառայությունների ուղղվող ծախսերը

	2020 փաստ.	2021 փաստ.	2022 բյուջե	2023 բյուջե
մլրդ դրամ				
Ընդամենը	883.5	877.0	948.7	1,236.4
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	344.3	381.0	430.1	513.1
Պաշտպանություն	387.8	336.0	347.0	520.5

Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	151.4	160.0	171.6	202.7
Աճ, %				
Ընդամենը	13.4	-0.7	8.2	30.3
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	7.6	10.6	12.9	19.3
Պաշտպանություն	22.9	-13.3	3.3	50.0
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	5.4	5.7	7.3	18.1
Նպաստումը, տոկոսային կետ				
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	3.1	4.1	5.6	8.8
Պաշտպանություն	9.3	-5.9	1.3	18.3
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	1.0	1.0	1.3	3.3

Բացի պաշտպանության ոլորտի ծախսերից, էական աճ է նախատեսված նաև «Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն» հոդվածի գծով: Վերջինիս աճը կազմելու է 18.1%՝ գերազանցելով սոցիալական և տնտեսական ոլորտներին հատկացվող գումարների աճին: Ընդ որում, այդ հոդվածում են նաև ներառված ոստիկանության և դատական գործունեության ծախսերը, որոնք աճելու են համապատասխանաբար 14.0%-ով և 24.0%-ով:

Գծապատկեր 8. Ընդհանուր նշանակության պետական ծառայություններին ուղղվող ծախսերի կառուցվածքը, %



Տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերը 2023 թվականին կկազմեն 267.6 մլրդ դրամ՝ 2022թ. թյուջեով նախատեսվածի համեմատ աճելով 12.7%-ով: Այս ծախսերի կազմում էական աճ է ծրագրվել գյուղատնտեսության ոլորտում՝ շուրջ 26.8%, որի արդյունքում գյուղատնտեսության ոլորտի ծախսերը


կկազմեն 72.3 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ 2022թ. գյուղատնտեսության ոլորտի բյուջեով նախատեսված ծախսերը ևս էապես բարձր էին և 2021թ. փաստացի ցուցանիշը գերազանցում են 25.1%-ով: Սակայն, գյուղատնտեսության անկումը 2022թ. շարունակվել է, հետևաբար, ծախսերի մեծացումը չի երաշխավորում գյուղատնտեսության ոլորտի անկման դադարումը հաջորդ տարի՝ մատնանշելով ծախսերի արդյունավետության պակասը:

Աղյուսակ 4. Տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերը

	2020 փաստ.	2021 փաստ.	2022 բյուջե	2023 բյուջե
մլրդ դրամ				
Ընդամենը	138.9	167.3	237.4	267.6
Տնտեսական հարաբերություններ	125.6	151.8	211.6	239.3
Շրջակա միջավայրի պաշտպանություն	4.4	6.0	9.8	9.4
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	8.9	9.5	16.0	19.0
Աճ, %				
Ընդամենը	3.7	20.5	41.9	12.7
Տնտեսական հարաբերություններ	12.2	20.9	39.4	13.1
Շրջակա միջավայրի պաշտպանություն	-23.9	36.2	62.1	-3.8
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	-45.2	7.2	67.9	18.4
Նպաստումը, տոկոսային կետ				
Տնտեսական հարաբերություններ	10.2	18.9	35.8	11.6
Շրջակա միջավայրի պաշտպանություն	-1.0	1.2	2.2	-0.2
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	-5.5	0.5	3.9	1.2

Տնտեսական ծառայությունների մյուս բաղադրիչներից շրջակա միջավայրի պաշտպանության գծով նախատեսվել է ավելի քիչ ծախս, քան 2022թ. բյուջեով, իսկ բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների գծով ծրագրվել է մեծացնել ծախսերի ծավալը 18.4%-ով: Արդյունքում տնտեսական ծառայությունների կառուցվածքում 2023թ. կաճի տնտեսական հարաբերությունների, ինչպես նաև բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով ծախսերի տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար 0.4 և 0.3 տոկոսային կետով:

Գծապատկեր 9. Տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերի կառուցվածքը, %




Սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերը, ըստ 2023թ. թվույցի, կկազմեն 1,050.7 մլրդ դրամ՝ 2022թ. թվույցով նախատեսված ցուցանիշը գերազանցելով 13.0%-ով, իսկ 2022թ. ճշտված պլանի համեմատ՝ 9.0%-ով: Սոցիալական ծախսերի աճին 7.8 տոկոսային կետով կնպաստեն սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերը՝ 12.4% աճով, որի կազմում աշխատանքային կենսաթոշակը կբարձրանա 11%-ով: Այդ աճը ներառում է ինչպես կենսաթոշակների աճը, այնպես էլ կենսաթոշակառուների աճը: Սոցիալական ծառայությունների գծով ծախսերի աճին կնպաստեն նաև առողջապահությանը և կրթությանն ուղղված ծախսերի համապատասխանաբար 21.6% և 9.8% աճերը:

Աղյուսակ 5. Սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերը

	2020 փաստ.	2021 փաստ.	2022 թվույց	2023 թվույց
մլրդ դրամ				
Ընդամենը	872.2	960.0	929.6	1,050.7
Առողջապահություն	148.2	160.5	122.5	149.0
Հանգիստ, մշակույթ և կրոն	33.6	30.4	32.8	36.4
Կրթություն	143.8	149.1	193.0	211.9
Սոցիալական պաշտպանություն	546.6	620.0	581.3	653.5
Աճ, %				
Ընդամենը	21.8	10.1	-3.2	13.0
Առողջապահություն	49.3	8.3	-23.7	21.6
Հանգիստ, մշակույթ և կրոն	0.2	-9.5	7.7	11.0
Կրթություն	11.2	3.7	29.5	9.8
Սոցիալական պաշտպանություն	20.4	13.4	-6.2	12.4
Նպաստումը, տոկոսային կետ				
Առողջապահություն	6.8	1.4	-4.0	2.9
Հանգիստ, մշակույթ և կրոն	0.0	-0.4	0.2	0.4

Կրթություն	2.0	0.6	4.6	2.0
Սոցիալական պաշտպանություն	12.9	8.4	-4.0	7.8

Գծապատկեր 10. Սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերի կառուցվածքը, %




Արդյունքում, ըստ 2022թ. բյուջեի սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերի կառուցվածքում կաճի առողջապահությանն ուղղված ծախսերի տեսակարար կշիռը:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱԶԴԱԿԸ

2023 թվականին ծրագրվել է ունենալ պետական բյուջեի պակասուրդ ՀՆԱ-ի 3.1%-ի չափով, որը 2022թ. սպասվող ցուցանիշից մեծ է շուրջ 0.6 տոկոսային կետով: Ընդ որում, 2022թ. պակասուրդի ցուցանիշը նույնպես պլանավորվել էր ՀՆԱ-ի 3.0%-ի չափով, սակայն հիմնականում կապիտալ ծախսերի թերակատարման արդյունքում սպասվող ցուցանիշն էականորեն ցածր է: Հաշվի առնելով այն, որ 2023թ. բարձր կապիտալ ծախսերի ծրագրի ամբողջական կատարման նախադրյալներ չկան՝ բյուջեի պակասուրդը հաջորդ տարի նույնպես կարող է ցածր լինել ծրագրվածից:


Պլանավորված պակասուրդի պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջակի վրա (հարկաբյուջետային ազդակը) կլինի չեզոք: Սակայն, եթե պակասուրդը ծրագրվածից փոքր լինի կապիտալ ծախսերի թերակատարման հետևանքով, ապա փաստացի հարկաբյուջետային ազդակը կարող է լինել զսպող:

Գծապատկեր 11. Պետական բյուջեի պակասուրդը



Բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը նման է 2022թ. բյուջեին, այն առումով, որ նախատեսվում է պակասուրդը ֆինանսավորել առավելապես ներքին աղբյուրների հաշվին: Մասնավորապես՝ ներքին աղբյուրներից ֆինանսավորման չափը կկազմի 302.8 մլրդ. դրամ, որից զուտ փոխառությունները՝ գանձապետական պարտատոմսերի զուտ տեղաբաշխումը կկազմի 295.2 մլրդ. դրամ: Ներքին աղբյուրներից ֆինանսավորման ծավալը գերազանցում է պակասուրդի ֆինանսավորման համար անհրաժեշտ կարիքը, հետևաբար գերազանցող մասը կուղղվի արտաքին պարտքի մարմանը՝ շուրջ 13.9 մլրդ. դրամի չափով:


Գծապատկեր 12. Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները, մլրդ. դրամ



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Հարկաբյուջետային քաղաքականությանը «օգնում է» ոչ միայն տնտեսական աճի բարձր մակարդակը, այլ նաև փոխարժեքի արժևորումը: Մասնավորապես, 2022թ. հոկտեմբերի վերջի դրությամբ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը (ըստ ՀՀ ԿԲ տվյալների) կազմել է 395.4 դրամ՝ տարեսկզբի համեմատ արժևորվելով 21.4%-ով: Քանի որ կառավարության պարտքի կառուցվածքում մեծ կշիռ ունի արտաքին պարտքը (2021թ. տարեվերջի դրությամբ՝ շուրջ 70.6%), ապա փոխարժեքի արժևորումը էապես կրճատում է պարտքի դրամային ծավալը՝ հանգեցնելով պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազման:

Գծապատկեր 13. ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2019-2023թթ., %



Արդյունքում, ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2022թ. տարեվերջին սպասվում է, որ կկազմի 50.1%, իսկ 2023թ.-ին՝ 49.8%: Սակայն, հաշվի առնելով կապիտալ ծախսերի թերակատարումները՝ պարտքի բեռը կարող է ավելի ցածր լինել: Պարտքի բեռի նվազման կարևոր գործոն է նաև բարձր տնտեսական աճը, որը նաև հաջորդ տարվա պարտքի նվազումը բացատրող գործոն է: Սակայն, եթե կառավարության կողմից թիրախավորված տնտեսական աճի տեմպը չպահպանվի, ապա պարտքի նվազման տեմպը կդանդաղի:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ

2020 և 2021 թվականներին «բացառիկ դեպքի» կարգավորումներից օգտվելով՝ կառավարությունը չի պահպանել հարկաբյուջետային կանոնները (օրենքով ունենալով այդ հնարավորությունը), սակայն 2022-ին պլանավորել էր ամբողջական վերադարձը ՀՀ օրենսդրությամբ բնականոն իրավիճակների համար սահմանված հարկաբյուջետային կանոնների ամբողջական պահպանմանը: Մինչդեռ, 2022թ. սպասվող ցուցանիշների թվում մասնավորապես, ընթացիկ ծախսերի (առանց տոկոսավճարների) աճի տեմպը գերազանցում է կանոններով սահմանված մեծությունը: Կապիտալ ծախսերի մասով կանոններն ամբողջությամբ պահպանված են:

2023թ. բյուջեն ծրագրվել է հարկաբյուջետային կանոնների ամբողջական պահպանման հիման վրա: Սակայն, հնարավոր է, որ բյուջեի կատարման ընթացքում իրավիճակը փոխվի:

ԱՄՓՈՓՈՒՄ

Բյուջեի ցուցանիշների աճի համար հիմք հանդիսացող տնտեսական բարձր աճը կարող է ժամանակավոր լինել: Կառավարությունը, անկախ իր գործողություններից, ստացել է բարձր տնտեսական աճի ստեղծած հնարավորությունները և ներկայացրել բարձր ցուցանիշներով բյուջեի նախագիծ: Սակայն, տնտեսական աճը արագացնող գործոնները կախված չեն ինչպես կառավարության գործողություններից, այնպես էլ ՀՀ ներքին այլ գործոններից: Փոխարենը դրանք կախված են աշխարհաքաղաքական իրավիճակից, որը շատ կտրուկ կարող է փոխվել: Մինչդեռ կառավարությունը իրավիճակին համապատասխան տնտեսության «գերտաքացող» ոլորտներից դեպի տնտեսության ներուժը բարձրացնող ոլորտներ ռեսուրսների վերաբաշխման քաղաքականություն չի իրականացնում, ինչը միջնաժամկետում, ներկա դրական շուկի վերացման պայմաններում, խնդիրներ կստեղծի տնտեսական աճի ապահովման տեսանկյունից:

2023թ. տնտեսական աճի կանխատեսումը էական ռիսկեր է պարունակում: Կառավարությունը շարունակել է բյուջեն կառուցել թիրախային, այլ ոչ թե կանխատեսվող տնտեսական աճի հիման վրա: Սակայն, մյուս բոլոր կառույցները 2023-ին տնտեսական աճը կանխատեսում են 4-5%-ի շրջանակներում: Հետևաբար, այս մասով առկա են ռիսկեր, որոնց նյութականացումը կհանգեցնի բյուջեի եկամուտների նվազմանը,

Ֆինանսավորման կարիքի աճին և պարտքի բեռի սպասվածից ավելի բարձր մակարդակի ձևավորմանը:

Բյուջեի կատարման համար ռիսկային է նաև հարկային եկամուտների կանխատեսումը: 2023-ի համար կառավարությունը թիրախավորել է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավում շուրջ 0.5 տոկոսային կետով, այն դեպքում, երբ առկա է առնվազն 0.6 տոկոսային կետով օրենսդրական բացասական ազդեցություն: Դա նշանակում է, որ հարկային վարչարարության միջոցով պետք է բարելավվի հարկեր/ՀՆԱ ցուցանիշը առնվազն 1.1 տոկոսային կետով: Վերջինս անիրատեսական է, հաշվի առնելով այն, որ 2022թ. բարձր տնտեսական աճի պայմաններում վարչարարության բարելավման հաշվին հարկեր/ՀՆԱ-ի բարելավում գրեթե չի արձանագրվել:

Կապիտալ ծախսերի խոշոր ծավալի իրականացումը արժանահավատ չէ: Կառավարությունը կրկին ներկայացրել է բավական բարձր կապիտալ ծախսերի նախագիծ (557.7 մլրդ դրամ՝ ՀՆԱ-ի 6.0%-ը), որն ոչ ամբողջությամբ է կատարվելու՝ հաշվի առնելով ինչպես 2022-ի, այնպես էլ նախորդ տարիների կատարողականները: Հետևաբար, անհասկանալի է բարձր թիրախ սահմանելու նպատակը, եթե ի սկզբանե հայտնի է, որ այն չի կատարվելու: Այս կերպ վարվելու արդյունքում նվազում է ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, քանի որ արտաքին վարկերը հատկացվում են ՀՀ-ին այդ ծրագրերի իրականացման նպատակով, այնուհետև վարկերից չօգտվելու համար ՀՀ կառավարությունը վճարում է մեծ չափով տույժեր: Բացի այդ, նվազում է վստահությունը հարկաբյուջետային քաղաքականության նկատմամբ՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործընկերների շրջանում, ինչը հանգեցնում է նաև երկրի նկատմամբ վստահության անկման:

Պաշտպանության ոլորտի ծախսերի աճը ողջունելի է, սակայն փաստացի ցուցանիշները, ինչպես կապիտալ ծախսերի պարագայում, մտահոգության առիթ են տալիս: Պաշտպանության ոլորտի ծախսերի էական բարձրացումը դրական երևույթ է՝ հաշվի առնելով հետպատերազմական վիճակում անվտանգության ապահովման կարևորությունը: Սակայն, 2021 և 2022 թվականներին պաշտպանության ոլորտում ծախսերի նշանակալի բարձրացում տեղի չի ունեցել, իսկ 2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ճշտված պլանը կատարվել է ընդամենը 67.5%-ով: Հետևաբար, ինչպես կապիտալ ծախսերի դեպքում, պաշտպանության ոլորտի ծախսերի էական մեծ մակարդակի իրականացումն արժանահավատ չէ:

Կառավարության կողմից լրացուցիչ ռեսուրսների բաշխման ուղղությունները խնդրահարույց են: 2023թ. նախատեսվել է էապես բարձրացնել «Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն» հոդվածի գծով ծախսերի ծավալը: Վերջինիս աճը կազմելու է 18.1%՝ գերազանցելով սոցիալական և տնտեսական ոլորտներին հատկացվող գումարների աճին: Ընդ որում, այդ հոդվածում են նաև ներառված ոստիկանության և դատական գործունեության ծախսերը, որոնք աճելու են համապատասխանաբար 14.0%-ով և 24.0%-ով, այն դեպքում, երբ սոցիալական պաշտպանության ծախսերը աճելու են ընդամենը 12.4%-ով:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: